ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ
(Վաչե Վարժապետյանի հավաքածուի մասին)

Կան գործեր, որոնք արժանի են առանձնահատուկ ուշադրության և գնահատանքի: Այդպիսին է ամերիկահայ Վաչե Վարժապետյանի կատարած աղգանպաստ գործը: Բազմիցս լինելով Հայաստանում՝ նա հաճախ է կրկնում, որ յուրաքանչյուր հայ իր պարաքը պետք է կատարի հայրենիքի հանդեպ: Վաչեի պապը՝ Բյուրատ Վարժապետյանը, չափազանց հարգված մի անձնավորություն, գասավանդել է Կ. Պոլսի Գալստյան վարժարանում, այնուհետև եղել է Հելիոպոլսո Նուպարյան վարժարանի տնօրենը: Վ. Վարժապետյանին շատ են հետաքրքրել պապի թողած հիշողություններն իր կյանքի և աշխատանքի մասին: Բյուրատի հայրենասիրական ոգին փոխանցվել է զավակին, որից էլ թոռանը՝ Վաչեին:

Վաչե Վարժապետյանը բարձրագույն կրթություն է ստացել Նյու Յորքում: Տասը տարի շարունակ, գրեթե ամեն օր, հաճախել է «Նյու Յորք Թայմս» թերթի խմբագրության արխիվ և այնտեղից ջանասիրաբար քաղել 1850–1950 թթ. պարբերականի էջերում զետեղված և հայ ժողովրդին վերաբերող քաղաքական, տնտեսական, մշակութային բնույթի հոդվածներ: Դրանցից շատերն այսօր վավերագրերի արժեք ունեն, հոդվածներ, որոնք ներկայացնում են այդ ժամանակահատվածի ԱՄՆ-ի հայ համայնքի առօրյան, նյութերում հիշատակված են բազմաթիվ հայազգի անուններ, որոնք հանիրավի մոռացված են մեր օրերում: Ներկայացված են ինչպես անհատների, այնպես էլ պետական գործիչների գնահատականները 1915 թ. հայկական ողբերգական իրադարձությունների նկատմամբ:

Վստահ եմ, որ յուրաքանչյուր մտավորական կերազեր ունենալ նման հարուստ տեղեկատվություն: Դրանք, անշուշտ, կհետաքրքրեն և՛ պատմաբաններին, և՛ քաղաքագետներին ու արվեստագետներին: Չէ՞ որ անցյալի փաստերը պատմությունը կերտելու հիմնաքարերն են:

Ուստի, կարծում եմ, մեզանում կգտնվեն շահագրգիռ կազմակերպություններ, անձինք, որոնք կցանկանան Հայաստանում տեսնել, իրոք, եզակի այս արխիվը, և մեր հայրենակցի տարիների տքնաջան աշխատանքը չի մնա կրկնակի լռության մեջ...

ԱՆՈՒՇ ԽԱՉԱՏՐՅԱՆ